



ԱՌՄԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԶԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29988
նոյեմբեր 18, 1986

Հոգեշնորհ
Տ. Փառէն Ժ. Վրդ. Աւետիքեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Սառւթֆիլտ.

Սիրելի Հայր Փառէն,

Այսու գիրով կը յայտնենք որ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներու եւ անձնափոխանորդի համար, թեմական Կանոնադրութեան 14-9 եւ 54 յօդաւածներուն համաձայն, եւ 1985 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 16, 1987, որպէս՝ զի կարելի ըլլայ հրաւիրել զանոնք թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 7-9, 1987, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Սփրինկֆիլտ Մասսաչուսէցի Ս. Մարկոս Հայց. Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, ծխական Խորհուրդի ատենապետին եւ ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագիրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Վկայագիրի նմոշ

Թուական

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար կամ Տիկին _____
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցւոյ եւ _____ 1987ին
զումարուած Տարեկան Անդամական ժողովի ընթացքին ընտրուած է թեմական պատ-
գամաւոր:

Ժխական Խորհուրդի
Ատենադպիր

Ժխական Խորհուրդի
Ատենապետ

Հոգեւոր Հովիւ

Date _____

This is to certify that _____ is a member in
good standing of the _____ Armenian
Church; and was duly elected a Diocesan Delegate by the General
Assembly on _____.

Parish Council Secretary

Parish Council Chairman

Parish Priest